Սոնա Բաբաջանյան

Սուշի տարօրինակ ճամփորդությունը

Հեքիաթ

new mag
Երակ

Երևան
2023

BookMark

ՀՏԴ 821.19-93 Բաբաջանյան
ԳՄԴ 84(5Հ)-45
Բ 125

Բաբաջանյան Սոնա
Բ 125 Մուշի տարօրինակ ճամփորդությունը: Հեքիաթ / Ս. Բաբաջանյան.- Եր.: Newmag, 2023.- 148 էջ:

Սարսափելի վթարից հետո փոքրիկ Մուշի մեջ վախ է մտել. նա վախենում է մթությունից, վախենում է, որ այլևս չի կարողանա քայլել, վախենում է կորցնել հայրիկին և այլևս երբեք չվերադառնալ իր նախկին կյանքին: Բայց մի բարի օր, ավելի շուտ՝ մի բարի գիշեր, երբ նա, վերմակի տակ ծածկված, փորձում է թաքնվել իր այդ վախերից, մի զարմանալի հյուր է այցելում նրան: Տղայի սեփական երազի միջից պատահաբար Արտաշխարհ վայր ընկած փոքրիկ, տարօրինակ արարածը՝ Փսփսիկը, աղերսում է փրկել իրեն և վերադարձնել իր հայրենի Ներաշխարհ: Տղան Փսփսիկի օգնությամբ վերագտնում է իր մոռացված ընկերոջը՝ Լուսունիկին, որի ուղեկցությամբ տարօրինակ եռյակը ճամփա է ընկնում դեպի Մուշի երազների հրաշալի երկիր: Ճանապարհին նրանք հանդիպում են զարմանահրաշ արարածների և անցնում բազմաթիվ փորձությունների միջով:

ԸՆՆ. նախատեսված է 6-9 տարեկան երեխաների համար:

ՀՏԴ 821.19-93 Բաբաջանյան
ԳՄԴ 84(5Հ)-45

ISBN 978-9939-884-91-2
Սոնա Բաբաջանյան «Մուշի տարօրինակ ճամփորդությունը»
© 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքված պայմանագրով:

«Երազ» մատենաշարի գործընկեր
YERAZ PROJECTS

Բովանդակություն

Գլուխ առաջին	Որտեղ հայտնվում է տարօրինակ այցելուն	6
Գլուխ երկրորդ	Որտեղ Փսփսիկը ներկայացնում է ստեղծված բարդ իրավիճակը	12
Գլուխ երրորդ	Որում տարօրինակ եռյակը ճամփա է ընկնում	19
Գլուխ չորրորդ	Որտեղ ճամփորդները գտնում են Բաց դուռը և գնում Ներաշխարհ	25
Գլուխ հինգերորդ	Որտեղ Մուշը պատրաստվում է նոր փորձությունների	31
Գլուխ վեցերորդ	Որում ճամփորդները հանգստանում են Թերթեմոնի ծառի տակ և հանդիպում Փողանազուկին	39
Գլուխ յոթերորդ	Որում ճամփորդներն անցնում են Երազավանի միջով, և Մուշը հավատում է, որ ամեն ինչ լավ է լինելու	46
Գլուխ ութերորդ	Որտեղ հայտնվում են Տոբորն ու Բոտորը	53
Գլուխ իններորդ	Որտեղ հայտնվում է Մայրան և ճամփորդներին ուղեկցում մինչև Մեծ լիճ	61
Գլուխ տասներորդ	Որտեղ ճամփորդները հասնում են Մեծ լիճ	69
Գլուխ տասնմեկերորդ	Որտեղ ճամփորդները հանդիպում են Պարունիկին, և շատ կարևոր բաներ են կատարվում	76
Գլուխ տասներկուերորդ	Որտեղ Մուշն իմանում է կատարվածը և գտնում կորցրածը	86
Գլուխ տասներեքերորդ	Որում ճամփորդներն անցնում են Սպիտակ եզերքով	92
Գլուխ տասնչորսերորդ	Որում ճամփորդներն անցնում են Նանիր տափարակով և հանդիպում են Ապշաբոցին	101
Գլուխ տասնհինգերորդ	Որում ճամփորդները հյուրընկալվում են Բազմադեմ տանը	108
Գլուխ տասնվեցերորդ	Որում ճամփորդները ոտք են դնում Գորշ ամպերի եզերք	114
Գլուխ տասնյոթերորդ	Որտեղ ճամփորդները հանդիպում են գարշերին	120
Գլուխ տասնութերորդ	Բաց դռների օրը	128
Գլուխ տասնիններորդ	Պարահանդեսը	136
Գլուխ քսաներորդ	Շատրվան-Աղբյուր-Դուռ	140
	Վերջաբան	143

BOOK

Գլուխ առաջին

Որտեղ հայտնվում է տարօրինակ այցելուն

Եթե մեր պատմությունը սկսենք նրանից, որ Մուշը վախենում էր գիշերներից, կարող է թվալ, թե Մուշը վախկոտ էր: Ամենևին: Մի ժամանակ նա նույնիսկ սիրում էր գիշերները: Ժամեր շարունակ պառկում էր անկողնում և երազում, մտածում տարատեսակ բաների մասին, որոնց համար ցերեկը ժամանակ չէր գտնում: Պատմություններ էր հորինում՝ նայելով պատին պարող ստվերներին, կամ պարզապես թաքուն կարդում էր լապտերիկի լույսով՝ վերմակը գլխին քաշած: Մայրիկը թույլ կտար մի քիչ էլ կարդալ, բայց դե թաքուն կարդալը միշտ շատ ավելի հավես էր: Եվ մթությունն էլ ամենևին չէր վախեցնում:

Այո՛, Մուշը վախկոտ չէր եղել: Մի անգամ՝ ամռանը, ծովում այնքան հեռու էր լող տվել, որ ափը համարյա չէր երևում, և այնտեղ՝ այդ խորքերում, սուզվում էր ավելի խորը ու նայում շուրջը վխտացող գույնզգույն ձկնիկներին: Մի անգամ էլ բարձր, շատ բարձր պատի վրայից էր ցատկել: Հենց այնպես, ապացուցելու համար, որ

երևի մուկ է...»: Մուշն առանձնապես չէր վախենում մկներից, բայց տարօրինակ ձայնը գալիս էր Մուշի մահճակալի կողքի սեղանիկի վրայի գրքի հետևից: Մուկն ի՞նչ գործ ունի այդքան բարձր: «Մո՛ւշ, Մո՛ւշ»,– կրկին լսվեց գրքի հետևից: Այս անգամ շատ ավելի բարձր ու հստակ էր՝ լռեցնելով մնացած բոլոր անորոշ ձայները: Տղայի սիրտը ծանր քարի պես գլորվեց փորի մեջ, և աչքերի առաջ ամեն ինչ սևացավ:

— Հե՛յ, դո՛ւ, ի՞նչ ես ապուշ կտրել: Չե՞ս լսում: Ես էստեղ եմ: Էհե՛յ...

Մուշը մի կերպ հավաքեց իրեն, վիրավոր ոտքը դժվարությամբ քաշելով՝ կիսանստեց անկողնու մեջ և վառեց սեղանիկի վրայի լույսը: Նրա մատները դողում էին:

Ամեն բան իր տեղում էր՝ լամպը, ջրի բաժակը, դեղի սրվակը, ժամացույցը, գիրքը... Ուրիշ ոչինչ: Բայց չէր հասցրել հանգստացած շունչ քաշել, ծանր գիրքը հանկարծ թեթևակի շարժվեց, և դրա հետևից հայտնվեց մի պստլիկ գլուխ: Մուշն այնքան ապշեց, որ վախը նույնիսկ մի փոքր տեղի տվեց ու նահանջեց: Որևէ կասկած չկար, որ ամենևին էլ մկան գլուխ չէր: Քիչ անց հայտնվեց նաև գլխի տերը: Նման արտառոց արարածի կյանքում չէր տեսել: Ո՛չ կենդանի էր, կարծես թե, ո՛չ միջատ... Պուճուր, թիզուկես մարմինը ծածկված էր փափուկ սև մորթիով: Հսկայական, կլոր աչքեր ուներ, փռչոտ գլուխ: Երկար, սլացիկ ականջներն այնպես էին վեր խոյանում, ասես ալեհավաք լինեին: Բայց ամենազարմանալին, իհարկե, այն էր, որ տարօրինակ այցելուի հագին սև, կաշվեկար թիկնոց էր, բարալիկ ոտքերին՝ փոքրիկ կաշվե կոշիկներ:

— Ի՞նչ ես շշմել, չե՞ս տեսնում՝ պոչս լռվել է, գուցե վերջապես օգնե՞ս,– դժգոհ մռթմռթած արարածը:

չի վախենում: Ճիշտ է, ատամն էր ջարդել, բայց միայն տեսնեիք, թե ինչ հպարտ ու գոհ էր, երբ արյունլվիկ վերադառնում էր տուն: Է՜հ, երնե՜կ էն օրերին, երբ կարող էր ուզածի չափ ցատկել, թռվռալ ու վազվզել: Բայց այդ զզվելի օրը փոխեց ամեն ինչ... Եվ գուցե Մուշն այլևս չկարողանա կարգին քայլել: Գուցե երբեք:

Մաման Մուշին բերեց գյուղ՝ տատիկի մոտ, որ «գոնե մի քիչ ցրվի», բացի դրանից՝ պիտի աշխատեր, տղային նայող էլ չկար, և այդպես շարունակ: Մուշին հարցնող, իհարկե, չեղավ: Ճիշտն ասած, հիմա դա արդեն կարևոր էլ չէր: Իրականում տատիկենց տանն այնքան էլ վատ չէր. ամառային փոքրիկ տնակ տնամերձով, մաքուր օդ: Շունը՝ Մուգը, նոր, պստլիկ փիսոն, որին նույնիսկ անուն չէին հասցրել դնել: Լիքը մոշ ու մորի. կեր, ինչքան սիրտդ կուզի: Տատիկն էլ՝ բարի, առույգ, ժպտերես: Մուշը շատ էր սիրում տատիկին: Բայց այս ամառ տղան ասես ավելի միայնակ լիներ և չգիտեր՝ ինչով լցներ օրը: Կարգին քայլել չես կարող, ընկերներդ հեռու են, տատիկն անվերջ զբաղված է իր գործերով, երբ զբաղ–վածէլ չէ, չափից ավելի հոգածու է, ինչը Մուշին դուր չի գալիս: Ամե–նից շատ չի սիրում, որ իրեն խղճում են: Տատիկը կոմպ, իհարկե, չունի: Հին, պստլիկ հեռուստացույցն ընդամենը մի քանի ձանձ–րալի ալիք է բռնում: Մուշը դեռ չի կարողանում կարգին քայլել, և պարզ էլ չէ, թե արդյոք կկարողանա երբևէ: Ինչո՞վ լցնես օրերդ, որ չմտածես և նորից ու նորից չվերհիշես էն վերջին ակնթարթը, երբ հայրիկը ժպտալով շրջվեց Մուշի կողմ, հետո լսվեց ինչ–որ աննկա–րագրելի ճռռոց, և ամեն ինչ սուզվեց մթության մեջ:

Հիմա բոլորը հիմարի տեղ են դնում իրեն: Կարծես ինքը չի հաս–կանում: Կարծես չի լսում մեծերի փսփսոցը, չի նկատում նրանց

խղճահար հայացքները: Հայրիկը վտանգի մեջ է և գուցե այլևս չվերադառնա: Եվ երբ Մուշը մտածում է այդ մասին, ուզում է անհետանալ: Փակել աչքերն ու անհետանալ: Բայց երբ գալիս է գիշերը, այսինքն՝ աչքերը փակելու ժամանակը, ամեն ինչ ավելի անտանելի է դառնում: Տատիկը համբուրում, բարի գիշեր է մաղթում, անջատում է լույսը, փակում դուռը: Մուշը լսում է նրա քայլերի մարող քստքստոցը, և ամեն ինչ սուզվում է լռության ու մթության մեջ: Եվ սկսվում է տարատեսակ ձայների գիշերը: Մանրիկ թրխկոցներ, շշուկներ, հևոց, երբեմն՝ նույնիսկ կամացուկ լաց կամ փռթկոց: Մուշն ամուր փակում է աչքերը, գլխին քաշում վերմակը, որ ոչ մի բան չլսի ու չտեսնի, բայց իրենից անկախ ականջները սրած՝ լսում է, լսում, լսում՝ փորձելով այդ օտար ձայները զանազանել իր սրտի բարձր թփթփոցից: Ու փորձում է հասկանալ: Բայց դա էնքան էլ հեշտ չէ: Որոշ ժամանակ անց քունը վերջիվերջո գալիս է ու Մուշի կոպերին ծանրանալով՝ նրան «տանում է» երազների աշխարհ: Բայց երազներն էլ այստեղ մի տեսակ կտրտված են, վախենալու, անհեթեթ, ասես ուրիշի երազները լինեն և սխալմամբ են հասել Մուշին:

Այդ գիշեր, ինչպես նախկին վեց անտանելի գիշերները, որ նա մի կերպ էր անցկացրել տատիկի տանը, Մուշը կծկվեց անկողնու մեջ, գլխին քաշեց վերմակը, ամուր փակեց աչքերը և պատրաստվեց անհետանալ: Եվ խավարը, ինչպես միշտ, սկսեց արթնանալ ու շնչել:

«Վարագույրն է,– ինքն իրեն համոզում էր Մուշը, – քամին է... ծառերի ճյուղերն են...»: Անհասկանալի ձայները, շշուկներն ու թրխկոցները սաստկանում էին ու շատանում՝ խառնվելով Մուշի սրտի տրոփյունին: Մի պահ տղային նույնիսկ թվաց, թե ինչ-որ մեկն իր անունն է շշնջում բարակ, ծվծվան ձայնով՝ Մո՛ւշ, Մո՛ւշ... «Վե՛րջ տուր, ամոթ է,

երևի մուկ է...»: Մուշն առանձնապես չէր վախենում մկներից, բայց տարօրինակ ձայնը գալիս էր Մուշի մահճակալի կողքի սեղանիկի վրայի գրքի հետևից: Մուկն ի՞նչ գործ ունի այդքան բարձր: «Մո՛ւշ, Մո՛ւշ»,– կրկին լսվեց գրքի հետևից: Այս անգամ շատ ավելի բարձր ու հստակ էր՝ լռեցնելով մնացած բոլոր անորոշ ձայները: Տղայի սիրտը ծանր քարի պես գլորվեց փորի մեջ, և աչքերի առաջ ամեն ինչ սևացավ:

— Հե՛յ, դո՛ւ, ի՞նչ ես ապուշ կտրել: Չե՞ս լսում: Ես էստեղ եմ: Էհե՛յ...

Մուշը մի կերպ հավաքեց իրեն, վիրավոր ոտքը դժվարությամբ քաշելով՝ կիսանստեց անկողնու մեջ և վառեց սեղանիկի վրայի լույսը: Նրա մատները դողում էին:

Ամեն բան իր տեղում էր՝ լամպը, ջրի բաժակը, դեղի սրվակը, ժամացույցը, գիրքը... Ուրիշ ոչինչ: Բայց չէր հասցրել հանգստացած շունչ քաշել, ծանր գիրքը հանկարծ թեթևակի շարժվեց, և դրա հետևից հայտնվեց մի պստլիկ գլուխ: Մուշն այնքան ապշեց, որ վախը նույնիսկ մի փոքր տեղի տվեց ու նահանջեց: Որևէ կասկած չկար, որ ամենևին էլ մկան գլուխ չէր: Քիչ անց հայտնվեց նաև գլխի տերը: Նման արտառոց արարածի կյանքում չէր տեսել: Ո՛չ կենդանի էր, կարծես թե, ո՛չ միջատ... Պուճուր, թիզուկես մարմինը ծածկված էր փափուկ սև մորթիով: Հսկայական, կլոր աչքեր ուներ, փռչոտ գլուխ: Երկար, սլացիկ ականջներն այնպես էին վեր խոյանում, ասես ալեհավաք լինեին: Բայց ամենազարմանալին, իհարկե, այն էր, որ տարօրինակ այցելուի հագին սև, կաշվեկար թիկնոց էր, բարալիկ ոտքերին՝ փոքրիկ կաշվե կոշիկներ:

— Ի՞նչ ես շշմել, չե՞ս տեսնում՝ պոչս լռվել է, գուցե վերջապես օգնե՞ս,– դժգոհ մռթմռթած արարածը:

«Ամեն ինչ պարզ է: Ես քնած եմ: Ի՞նչ հիմար երազ...»,– մտածեց Մուշը՝ փոքր-ինչ թեթևացած, և էնպիսի ուժով կսմթեց իր քիթը, որ նույնիսկ վեր թռավ ցավից:

— Ա՛յ մարդ, ի՞նչ երազ,– գլուխը հուսահատ թափ տվեց տարօրինակ արարածը՝ կարծես կարդալով Մուշի միտքը: – Երանի չէ՞ր: Երազիցդ է, որ ընկել եմ: Իմ մեղքն է, իհարկե, բան չունեմ ասելու... Մոռացել էի, որ այսօր Բաց դռների օրն է:

Մուշը պապանձվեց:

— Ամեն տեղ փոսեր են...,– դժգոհ ավելացրեց փոքրիկ այցելուն ու այնպիսի ուժգնությամբ փռշտաց, որ գիրքը ցնցվեց, և դրա տակից դուրս պրծավ երկար, բարակ պոչը: Այն կասկածելիորեն մկան պոչ էր հիշեցնում, բայց դե դա արդեն ոչինչ չէր փոխում:

Մուշը շվարած նայում էր տարօրինակ այցելուին և չգիտեր, թե ինչ մտածի:

— Ֆո՛ւհ, փա՛ռք Աստծո,– թեթևացած հոգոց հանեց ճստիկը՝ ուրախ թափ տալով ազատագրված պոչը: – Լա՛վ, տղա՛ ջան, թո՛ւյլ տուր ներկայանալ: Փսփսիկ: Ներքին ձայների նախարարությունից:

Գիշերային հյուրն այս ամենն ասաց անսպասելիորեն փոխակերպված, բամբ ձայնով, հանդիսավոր կերպով խորը գլուխ տվեց՝ ալեհավաքները թրխկացնելով սեղանիկին:

Սուշի տարօրինակ ճամփորդությունը

BookMark